ՏԵՂԵԿԱՆՔ

«Առևտրաարդյունաբերական պալատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ

Հոդված 6. ՀՀ ԱԱՊ-ի գործառույթները

ՀՀ ԱԱՊ-ն, բացի սույն օրենքով պալատներին վերապահված գործառույթներից, իրականացնում է նաև հետևյալ գործառույթները՝

ա) համակարգում է ԱԱՊ-ների գործունեությունը, ներկայացնում է Հայաստանի Հանրապետության պալատների համակարգը ինչպես հանրապետությունում, այնպես էլ օտարերկրյա պետություններում.

բ) կարող է մասնակցել ձեռնարկատերերի շահերին առնչվող Հայաստանի Հանրապետության օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի մշակմանը.

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությամբ եզրակացություններ կամ առաջարկություններ է ներկայացնում հանրապետության տնտեսության զարգացման հարցերով.

դ) միջազգային առևտրային պայմանագրերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխան վկայում է անհաղթահարելի ուժի հանգամանքները (ֆորս-մաժոր), ինչպես նաև հանրապետությունում ընդունված գործարար շրջանառության սովորույթները.

ե) սահմանում է Հայաստանի Հանրապետության այն առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ոչ պետական գրանցամատյանի վարման կարգը, որոնց ֆինանսատնտեսական վիճակը վկայում է հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ձեռնարկատիրական գործունեության մեջ նրանց հուսալի և վստահելի գործընկեր լինելու մասին.

զ) ***(ենթակետն ուժը կորցրել է 20.05.05 ՀՕ-118-Ն)***

է) տալիս է ապրանքների ծագման սերտիֆիկատներ և օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում դրանց արժանահավատության համար: Ապրանքների ծագման սերտիֆիկատների տրամադրման կարգն ու վճարի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

ը) մասնակցում է փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության պետական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

(6-րդ հոդվածը փոփ. 20.05.05 ՀՕ-118-Ն)

թ) տրամադրում է ԱՏԱ Կառնետ հավաստագրեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով